



**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**  
**ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**

**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

**Թ Ի Վ 2**

**ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝  
2019 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 23-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ**

**Օրակարգում՝**

1. Ուսանողների հաճախումների վիճակը ֆակուլտետում:
2. Հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի և բակալավրիատի ընդունելության արդյունքները:
3. Երվանդ Օտյանին և Լևոն Շանթին նվիրված գիտական նստաշրջանի նախապատրաստական աշխատանքները ամբիոններում:
4. Հայոց լեզվի պատմության ամբիոնի տարեկան հաշվետվությունը:
5. Ընթացիկ հարցեր:

Ողջունելով գիտխորհրդի նիստի անդամներին՝ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը տեղեկացրեց, որ ֆակուլտետի գիտական խորհրդի 37 անդամներից նիստին մասնակցում է 29-ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Նա այնուհետև ծանոթացրեց օրակարգի հարցերին, որոնց քննարկումը միաձայն ընդունվեց բաց քվեարկությամբ:

**1-ին հարցի** առթիվ պրոֆ. Ա. Ավագյանը տեղեկացրեց, որ թեև ուսումնական տարին նոր է սկսվել, այնուամենայնիվ, բացառությամբ առաջին կուրսեցիների, ֆակուլտետում ուսանողների հաճախումների վիճակը մտահոգիչ է. արդեն կան առաջին արդյունքները: Դեկանն այնուհետև ներկայացրեց բոլոր կուրսերի ուսանողների հաճախումների պատկերը և դեկանատին ու ամբիոնների վարիչներին հանձնարարեց ամենօրյա հսկողությամբ շտապ կարգավորել իրավիճակը:

Օրակարգի **2-րդ հարցը** նվիրված էր հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի և բակալավրիատի ընդունելության արդյունքներին: Պրոֆ. Ա. Ավագյանն ասաց, որ, բարեբախտաբար, թեև սահմանագծով, այնուամենայնիվ երկու ուսուցման գծով էլ այս ուսումնական տարում ձևավորվել են հեռակա առաջին կուրսեր, որոնք ինչ-որ չափով կմեղմեն ամբիոնների ծանրաբեռնվածության ճգնաժամային վիճակը:

Օրակարգի **3-րդ հարցի** առիթով ելույթ ունեցավ ակադեմիկոս Հրանտ Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի վարիչ պրոֆ. Ս. Մուրադյանը: Նա մասնավորապես ասաց, որ հայ գրականության պատմության ամբիոնը, համագործակցելով մյուս ամբիոնների և արտահամալսարանական գիտական համապատասխան հաստատությունների հետ, արդեն ավարտել է Երվանդ Օտյանին և Լևոն Շանթին նվիրված գիտական նստաշրջանի նախապատրաստական աշխատանքները. քննարկվել են գեկուցումների թեմաները, որոշվել՝ հերթականությունը, և նախատեսված է նստաշրջանն անցկացնել նոյեմբերի երկրորդ կեսին:

Օրակարգի **4-րդ հարցը** նվիրված էր հայոց լեզվի պատմության ամբիոնի տարեկան հաշվետվությանը: Իր ելույթում ամբիոնի վարիչ պրոֆ. Ա. Աբաջյանը մասնավորապես ասաց հետևյալը.

- Հայոց լեզվի պատմության ամբիոնում իրենց գիտակրթական գործունեությունն են իրականացնում 11 անդամներ՝ 1 պրոֆեսոր, 5 դոցենտ, 5 ասիստենտ: Հայտնի պատճառներով մեր ամբիոնի ծանրաբեռնվածությունը այս ուսումնական տարում նույնպես պակասեց՝ 5.5 դրույքից հասնելով 5.25 դրույքի /1 դրույք -1 հոգի, 0,75 դրույք-5 հոգի, 0,25 դրույք -5 հոգի/, ինչն էլ 0.75 դրույքով աշխատողների ժամաքանակը չլրանալու պատճառով վարձատրությունը ընդհանուր ամբիոնում հաշվարկվել է 0.94 տոկոս գործակցով:

Ամբիոնն ունի 1 առկա ասպիրանտ, 3 հայցորդ: Պաշտպանության է հանձնված ամբիոնի առկա ասպիրանտ Թամարա Պողոսյանի ատենախոսությունը:

Հայոց լեզվի պատմության ամբիոնի՝ երկար տարիների ընթացքում ստեղծված գիտական, կրթական հիմնարար ավանդույթները պահպանվել և շարունակվում են այժմ:

Ամբիոնի աշխատակիցները հաշվետու տարում զբաղվել են գրաբարի, միջին հայերենի, բարբառագիտության, հայոց լեզվի պատմության հիմնահարցերի ուսումնասիրությամբ և այդ գիտակարգերին վերաբերող դասընթացների մշակմամբ ու կատարելագործմամբ, ինչպես նաև գիտահետազոտական աշխատանքով:

Հաշվետու ժամանակաշրջանում վերանայվել է հայոց լեզվի պատմության ամբիոնի դասընթացների մեծ մասը, թարմացվել են առարկայական քննությունների հարցաշարերը: Նշենք, որ այս ուստարում լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնները համատեղ ունեցան մագիստրոսական կուրս:

Հաշվետու ժամանակահատվածում հայոց լեզվի պատմության ամբիոնը կազմակերպել է մի շարք միջոցառումներ: Համառոտ դրանց մասին:

1/ 2018թ. նոյեմբերին կայացավ պրոֆեսոր Մանվել Ասատրյանի անվան լսարանի բացումը, որի վերանորոգումը կազմակերպել և ֆինանսավորել էր ամբիոնի վարիչ Ա. Աբաջյանը:

2/ 2018 թ. նոյեմբերի 29-ին հայոց լեզվի պատմության ամբիոնը հայոց լեզվի ամբիոնի հետ կազմակերպել էր «Աբեղյանական ընթերցումներ» հանրապետական 3-րդ գիտաժողովը, որտեղ զեկուցումներով հանդես եկան ինչպես ԵՊՀ-ից, այնպես էլ ՀՀ այլ բուհերից: Գիտաժողովի ընթացքում տեղի ունեցավ նաև նախորդ՝ «Աբեղյանական ընթերցումներ»- 2 զրքի շնորհանդեսը, որը լույս էր ընծայել ԵՊՀ հրատարակչությունը:

3/ Ամբիոնի դասախոսների մի մասը ղեկավարել է ՈւԳԸ զեկուցումներ, վարել նիստեր, մասնակցել ԵՊՀ-ի կազմակերպած աշակերտական օլիմպիադային: Նշենք, որ շատ դասախոսներ մասնակցել են որակավորման բարձրացման տարբեր դասընթացների:

4/ Մայրենիի օրվան նվիրված միջոցառումների շարքում ամբիոնի աշխատակիցներ Ս. Գրիգորյանը՝ Սևանի Վազգենյան հոգևոր ճեմարանում, իսկ Ն. Պարոնյանը Գևորգյան հոգևոր ճեմարանում հանդես են եկել զեկուցումներով:

5/ Հունիսին Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կազմակերպած Ջահուկյանական միջազգային գիտաժողովին զեկուցումներով հանդես են եկել դոց., դոց. Ն. Դիլբարյանը և Ա. Խաչատրյանը:

Ուսումնակրթական գործընթացին զուգահեռ՝ ամբիոնի դասախոսները հաշվետու ժամանակաշրջանում ծավալել են գիտահետազոտական գործունեություն՝ հանրապետության տարբեր հանդեսներում հրատարակելով գիտական 20 հոդված:

Ամբիոնի պրոֆ. Ա. Աբաջյանը, դոց., դոց. Ս. Գրիգորյանը, Ն. Դիլբարյանը, Ն. Պարոնյանը և Ա. Խաչատրյանը պատրաստվում են տպագրության հանձնել «Միջին հայերենի ուղեցույց-քրեստոմատիա», գրքի խմբագիրն է Բ. Գ. Դ., պրոֆ. Լալիկ Խաչատրյանը, գրախոսներն են Բ. Գ. Դ., պրոֆ. Թերեզա Շահվերդյանը և Բ. Գ. Դ. Հայկանուշ Մեսրոպյանը:

Հայոց լեզվի պատմության ամբիոնի երեք անդամներ աշխատում են գիտության պետական կոմիտեի պայմանագրային /թեմատիկ/ ֆինանսավորման արժանացած «Գրաբարյան դարձվածքների ձևախմբաստային և կառուցվածքային քննություն» գիտական թեմայի վրա /ղեկավար՝ Ա. Աբաջյան, անդամներ՝ Ն. Դիլբարյան, Ա. Յուզբաշյան և Ք. Հարությունյան /հայցորդ/, որի շրջանակներում տպագրվում են տվյալ թեմային առնչվող հոդվածներ:

Ընդհանուր առմամբ կարող ենք արձանագրել, որ ամբիոնում տիրում է աշխատանքային ստեղծագործական դրական մթնոլորտ:

Գիտական խորհրդի բոլոր անդամները միաձայն դրական գնահատեցին հայոց լեզվի պատմության ամբիոնի տարեկան աշխատանքները:

#### **ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐՈՒՄ ԼՍՎԵՑԻՆ.**

**ԼՍԵՑԻՆ** – ԵՊՀ-ի դոց. Աշոտ Տեր-Մինասյանի՝ ««Սամվել» վեպի երկրորդ հատորի առեղծվածը» գիրքը տպագրության երաշխավորելու հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Պրոֆ., պրոֆ. Ս. Մուրադյանը, Ալ. Մակարյանը, Վ. Սաֆարյանը, դոց. Ռ. Էլոյանը և այլք:

Նշվեց, որ բաֆֆիագիտության համար առ այսօր առեղծված է՝ Րաֆֆին «Սամվել» պատմավեպի երկրորդ հատորը գրել է, թե ոչ: Եթե գրել է, ապա կորած են ձեռագրերը, և

վեպը մնում է անավարտ, շատ գործողություններ, որ Բաֆֆին խոստացել է պատկերել այդ մասում, մնում են առկալիս:

Դոց. Ա. Տեր-Մինասյանը, ուսումնասիրելով Բաֆֆու ստեղծագործությունն ու նրա վերաբերյալ գրականագիտական աշխատությունները, հիմնավորում է, որ Բաֆֆին, իրոք, ավարտած է եղել «Սամվել» պատմավեպի երկրորդ հատորը, և համոզմունք է հայտնում, որ նոր որոնումները կարող են արդյունավետ լինել: Գտնվելու դեպքում կամբողջանա հայ պատմավիպասանության գլուխգործոցը, և կպարզաբանվեն այսօր գրականագիտությանը հուզող բազմաթիվ գաղափարական և գեղագիտական խնդիրներ:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Նկատի ունենալով խնդրի կարևորությունը և հենվելով մասնագիտական գրավոր կարծիքների ու բանավոր ելույթների վրա՝ Աշոտ Տեր-Մինասյանի ««Սամվել» վեպի երկրորդ հատորի առեղծվածը» ուսումնասիրությունը հանձնարարել տպագրության:

**ԼՍԵՑԻՆ.**– Նորագույն շրջանի հայ գրականության ամբիոնի առկա ուսուցման առաջին տարվա ասպիրանտ **Ալի Մահմուդ Ռեզայի Ռամշեհի** թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** – Բան. գիտ. դոկտոր, պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Վ. Գաբրիելյանը և բան. գիտ. թեկն., դոց. Ս. Գրիգորյանը:

Ատենախոսության թեմա առաջարկվեց «Իրանը 20-րդ դարի հայ գրականության մեջ»:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**– Հաստատել **Ալի Մահմուդ Ռեզայի Ռամշեհի** թեկնածուական ատենախոսության թեման՝ «Իրանը 20-րդ դարի հայ գրականության մեջ»՝ Ժ. 01.02- «Նորագույն շրջանի հայ գրականություն» մասնագիտությամբ: Գիտական ղեկավար նշանակել բան. գիտ. թեկն., դոցենտ Սեյրան Գրիգորյանին:

**ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

**ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ**

**ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ**

**ՊՐՈՖ. ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ**

